

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում:

► B

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
1999/93/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

(ՊՏ L 013, 19.01.2000թ., էջ 12)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

	No	էջ	ամսաթիվ
► M1	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 L 311 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008 (ԵՀ) կանոնակարգով	1	21.11.2008թ.

▼ B

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1999 թվականի դեկտեմբերի 13-ի
1999/93/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

Էլեկտրոնային ստորագրությունների Համայնքի շրջանակի մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 47(2), 55-րդ և 95-րդ հոդվածները,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),
հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),
գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (4),
Քանի որ

- 1) Հանձնաժողովը 1997 թվականի ապրիլի 16-ին Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե ու Տարածաշրջանային հարցերով կոմիտե հաղորդագրություն է ներկայացրել «Էլեկտրոնային առևտրի եվրոպական նախաձեռնության մասին»,
- 2) Հանձնաժողովը 1997 թվականի հոկտեմբերի 8-ին Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե ու Տարածաշրջանային հարցերով կոմիտե հաղորդագրություն է ներկայացրել «Թվային ստորագրությունների և գաղտնագրման Համայնքի շրջանակին վերաբերող էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում անվտանգության ու վստահության ապահովման մասին»,
- 3) Խորհուրդը 1997 թվականի դեկտեմբերի 1-ին Հանձնաժողովին առաջարկեց հնարավորինս շուտ առաջարկություն ներկայացնել «Թվային ստորագրությունների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի հրահանգի վերաբերյալ,
- 4) էլեկտրոնային հաղորդակցության և առևտրի համար անհրաժեշտ են «էլեկտրոնային ստորագրություններ» և տվյալների իսկությունը հաստատող հարակից ծառայություններ. անդամ պետություններում գործող՝ էլեկտրոնային ստորագրությունների իրավական ճանաչման և հավաստագրման ծառայություններ մատուցողների հավատարմագրման վերաբերյալ կանոնների տարբերությունները կարող են հանգեցնել էլեկտրոնային հաղորդակցության և էլեկտրոնային առևտրի հնարավորություններից օգտվելու լուրջ խոչընդոտների. մյուս կողմից, էլեկտրոնային ստորագրությունների պայմաններին վերաբերող Համայնքի շրջանակը կամրապնդի նոր տեխնոլոգիաների նկատմամբ վստահությունն ու դրանց ճանաչումը: Անդամ պետությունների օրենսդրությունը չպետք է խոչընդոտի ներքին շուկայում ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժը,
- 5) էլեկտրոնային ստորագրությամբ ապրանքների համատեղելիությունը պետք է խթանվի. Պայմանագրի 14-րդ հոդվածին համապատասխան, ներքին շուկան իրենից ներկայացնում է առանց ներքին սահմանների տարածք, որտեղ երաշխավորվում է ապրանքների տեղաշարժը. էլեկտրոնային ստորագրությամբ ապրանքների համար նախատեսված հիմնական պահանջները պետք է բավարարվեն ներքին շուկայում ազատ շրջանառությունն

ապահովելու և էլեկտրոնային ստորագրությունների նկատմամբ վստահություն ձևավորելու նպատակով՝ չհակասելով Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 19-ի «Երկակի գործածության ապրանքների արտահանման հսկողության համայնքային ռեժիմ սահմանելու մասին» (ԵՀ) (5) թիվ 3381/94 կանոնակարգին և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 19-ի «Երկակի գործածության ապրանքների արտահանման հսկողության վերաբերյալ՝ Խորհրդի կողմից ընդունված համատեղ գործողության մասին» (6) 94/942/ԸԱԱԲ որոշմանը,

6) սույն Հրահանգով չի ներդաշնակեցվում պետական քաղաքականությանը կամ պետական անվտանգությանն առնչվող ներպետական իրավունքի դրույթներով կարգավորվող ծառայությունների տրամադրումը տեղեկությունների գաղտնիության մասով,

7) ներքին շուկան երաշխավորում է անձանց ազատ տեղաշարժը, որի հետևանքով Եվրոպական միության քաղաքացիներն ու այդտեղ բնակվողներն ավելի ու ավելի շատ կարիք ունեն առնչվելու իրենց բնակության անդամ պետությունից տարբերվող անդամ պետությունների իշխանությունների հետ, ուստի այս առումով էլեկտրոնային հաղորդակցության մատչելիությունը կարող է մեծ օգուտ տալ,

8) տեխնոլոգիական արագ զարգացումը և համացանցի համընդհանուր բնույթը պահանջում են այնպիսի մոտեցում, որը բաց կլինի տարբեր տեխնոլոգիաների և ծառայությունների համար, որոնք հնարավորություն են տալիս տվյալների իսկությունը հաստատել էլեկտրոնային ճանապարհով,

9) էլեկտրոնային ստորագրությունը կկիրառվի բազմաթիվ տարբեր հանգամանքներում և դեպքերում, հանգեցնելով էլեկտրոնային ստորագրություններին անչվող կամ դրանք կիրառող նոր ծառայությունների և ապրանքների լայն շրջանակի ստեղծմանը, ընդ որում, այդ ապրանքների և ծառայությունների սահմանումը չի սահմանափակվի հավաստագրերի տրամադրմամբ և կառավարմամբ, այլ կներառի նաև էլեկտրոնային ստորագրություն կիրառող կամ դրան օժանդակող ցանկացած այլ ծառայություն ու ապրանք, ինչպես օրինակ՝ էլեկտրոնային ստորագրություններին առնչվող գրանցող, ժամանակը գրանցող ծառայություններ, տեղեկագրերի ծառայություններ, համակարգչային կամ խորհրդատվական ծառայություններ,

10) ներքին շուկան հնարավորություն է տալիս հավաստագրման ծառայություններ մատուցողներին զարգացնելու իրենց միջսահմանային գործունեությունը՝ դրա մրցունակությունը բարձրացնելու նպատակով, որի հետևանքով նրանք սպառողներին և

տնտեսավարողներին առաջարկում են, անկախ սահմաններից, անվտանգ կերպով տեղեկություններ փոխանակելու և առևտուր անելու նոր հնարավորություններ՝ բաց ցանցերում համահամայնքային հավաստագրման ծառայությունների մատուցումը խթանելու նպատակով հավաստագրման ծառայություն մատուցողները պետք է առանց նախնական թույլտվության ազատ լինեն մատուցել իրենց ծառայությունները. նախնական թույլտվություն նշանակում է ոչ միայն որևէ թույլտվություն, որի վերաբերյալ տվյալ հավաստագրման ծառայություն մատուցողը պետք է ներպետական մարմիններից համապատասխան որոշում ստանա՝ նախքան հավաստագրման ծառայություններ մատուցելը, այլ նաև՝ ցանկացած այլ միջոց, որը նույն ազդեցությունը կունենա,

11) կամավոր հավատարմագրման համակարգերը, որոնք նպատակ ունեն ապահովել ծառայությունների մատուցման առավել բարձր մակարդակ, ծառայություններն առավել զարգացնելու նպատակով հավաստագրման ծառայություն մատուցողներին կարող են առաջարկել համապատասխան շրջանակ, որը կբավարարի զարգացող շուկայի՝ վստահության, անվտանգության և որակի պահանջները. ընդ որում այդ համակարգերը պետք է խթանեն հավաստագրման ծառայություն մատուցողների միջև լավագույն փորձի զարգացումը, և հավաստագրման ծառայություն մատուցողները պետք է ազատ լինեն՝ միանալու կամ օգտվելու համար հավատարմագրման նման համակարգերից,

12) հավաստագրման ծառայությունները կարող են առաջարկվել կամ պետական մարմնի, կամ էլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից, եթե այն հիմնադրվել է ներպետական իրավունքի համաձայն. քանի որ անդամ պետությունները չպետք է հավաստագրման ծառայություն մատուցողներին արգելեն գործել հավատարմագրման կամավոր համակարգերից դուրս, ուստի պետք է ապահովել, որ հավատարմագրման նման համակարգերը հավաստագրման ծառայությունների համար մրցակցությունը չսահմանափակեն,

13) անդամ պետությունները կարող են որոշել, թե ինչպես են նրանք ապահովելու սույն Հրահանգով սահմանված դրույթներին համապատասխանության վերահսկողությունը, ընդ որում սույն Հրահանգը չի խոչընդոտում վերահսկողության մասնավոր համակարգերի ստեղծումը, սույն Հրահանգը հավաստագրման ծառայություն մատուցողներին չի պարտադրում դիմելու հավատարմագրման որևէ համակարգով վերահսկվելու համար,

14) անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել սպառողների և տնտեսավարողների կարիքների միջև,

15) երրորդ հավելվածը սահմանում է անվտանգ ստորագրության ստեղծման միջոցներին ներկայացվող պահանջները՝ զարգացած էլեկտրոնային ստորագրությունների գործառնությունը ապահովելու նպատակով. այն ամբողջությամբ չի կարգավորում այն միջավայրի համակարգը, որտեղ աշխատում են այդ սարքերը. ներքին շուկայի գործունեության համար Հանձնաժողովն ու անդամ պետությունները պետք է արագորեն միջոցներ ձեռնարկեն՝ նշանակելու երրորդ հավելվածում նշված անվտանգ ստորագրության ստեղծման միջոցների համապատասխանության գնահատման համար պատասխանատու մարմիններ. շուկայի պահանջը բավարարելու համար համապատասխանության գնահատումը պետք է լինի ժամանակին և արդյունավետ,

16) սույն Հրահանգը խթանում է էլեկտրոնային ստորագրությունների օգտագործումն ու իրավական ճանաչումը Համայնքի ներսում. կարգավորման համակարգ անհրաժեշտ չէ միայն այն համակարգերի ներսում օգտագործվող էլեկտրոնային ստորագրությունների համար, որոնք հիմնված են որոշակի թվով մասնակիցների միջև մասնավոր իրավունքին համապատասխան կնքված կամավոր պայմանագրերի վրա, ընդ որում կողմերի՝ միմյանց հետ էլեկտրոնային ստորագրությամբ տվյալների փոխադարձ ճանաչման պայմանների վերաբերյալ համաձայնության գալու ազատությունը հարգվում է այնքանով, որքանով դա թույլ է տալիս ներպետական իրավունքը. պետք է ճանաչվի նման համակարգերում օգտագործվող էլեկտրոնային ստորագրությունների իրավական ուժը և դատական վարույթներում դրանց ընդունումը որպես ապացույց,

17) սույն Հրահանգը նպատակ չի հետապնդում ներդաշնակեցնել պայմանագրային իրավունքին, մասնավորապես, պայմանագրերի մշակմանը և կատարմանը վերաբերող ներպետական կանոնները, կամ ստորագրություններին վերաբերող ոչ պայմանագրային բնույթի այլ ձևականություններ. այս նպատակով էլեկտրոնային ստորագրությունների իրավաբանական ազդեցությանն առնչվող պահանջները չպետք է հակասեն պայմանագրերի կնքման մասին ներպետական իրավունքով սահմանված պահանջներին կամ պայմանագրի կնքման վայրը որոշող կանոններին,

18) ստորագրության ստեղծման տվյալների պահումը կամ պատճենումը կարող է վտանգել էլեկտրոնային ստորագրությունների իրավական վավերականությունը,

19) էլեկտրոնային ստորագրություններն օգտագործվելու են պետական հատվածում՝ ներպետական և Համայնքի վարչակարգերի շրջանում և այդ վարչակարգերի ու քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների միջև հաղորդակցության ընթացքում,

մասնավորապես՝ պետական գնումների, հարկահավաքման, սոցիալական ապահովության, առողջապահության և արդարադատության համակարգերում,

20) էլեկտրոնային ստորագրությունների իրավաբանական ազդեցությանը վերաբերող ներդաշնակեցված չափորոշիչները Համայնքի տարածքում կապահովեն համաձայնեցված իրավական շրջանակ. ձեռագիր ստորագրությունների իրավական վավերականության վերաբերյալ ներպետական իրավունքը սահմանում է այլ պահանջներ. ուստի էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձի ինքնությունը հաստատելու համար կարող են կիրառվել հավաստագրեր. ստուգված հավաստագրի վրա հիմնված բարելավված էլեկտրոնային ստորագրությունների նպատակն անվտանգության ավելի բարձր մակարդակն է, ընդ որում, ստուգված հավաստագրի հիման վրա և անվտանգ էլեկտրոնային ստորագրության ստեղծման միջոցներով կատարված բարելավված էլեկտրոնային ստորագրությունները կարող են դիտարկվել որպես ձեռագիր ստորագրություններին իրավաբանորեն համարժեք միայն այն դեպքում, եթե ձեռագիր ստորագրություններին ներկայացվող պահանջները բավարարված են,

21) իսկության հաստատման էլեկտրոնային մեթոդների համընդհանուր ընդունմանը նպաստելու նպատակով՝ պետք է ապահովել, որ էլեկտրոնային ստորագրությունները բոլոր անդամ պետություններում դատական վարույթներում հնարավոր լինի օգտագործել որպես ապացույց , ընդ որում էլեկտրոնային ստորագրությունների իրավական ճանաչումը պետք է հիմնված լինի անկողմնակալ չափորոշիչների վրա և կախված չլինի տվյալ հավաստագրման ծառայություններ մատուցողին թույլտվությունից. ներպետական իրավունքը կարգավորում է այն իրավական ոլորտները, որտեղ կարող են օգտագործվել էլեկտրոնային փաստաթղթերը և էլեկտրոնային ստորագրությունները. սույն Հրահանգը չի հակասում ներպետական դատարանի իրավասությանը՝ վճիռ կայացնելու սույն Հրահանգի պահանջների հետ համապատասխանության հարցի վերաբերյալ և չի վերաբերում ապացույցների դատական անարգել քննությանը վերաբերող ներպետական կանոններին,

22) հանրությանը հավաստագրման ծառայություններ մատուցողները ենթարկվում են պատասխանատվության վերաբերյալ ներպետական կանոններին,

23) միջազգային էլեկտրոնային առևտրի զարգացման համար անհրաժեշտ են երրորդ երկրների մասնակցությամբ միջսահմանային պայմանավորվածություններ՝ համընդհանուր մակարդակով էլեկտրոնային ստորագրությունների համատեղ գործածությունն ապահովելու համար. երրորդ երկրների հետ հավաստագրման ծառայությունների փոխադարձ ճանաչման

վերաբերյալ բազմակողմ կանոնների մասին համաձայնագրերն այդ առումով կարող են արդյունավետ լինել,

24) էլեկտրոնային հաղորդակցության և էլեկտրոնային առևտրի նկատմամբ օգտվողների վստահությունը խթանելու նպատակով հավաստագրման ծառայություններ մատուցողները պետք է հետևեն տվյալների պաշտպանության օրենսդրության և անձնական գաղտնիության պահանջներին,

25) հավաստագրերում ծածկանունների օգտագործման մասին դրույթներն անդամ պետություններին չեն արգելում Համայնքի և ներպետական իրավունքին համապատասխան անձի նույնականացման պահանջ ներկայացնել,

26) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն «Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը սահմանող»՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն (7),

27) հրահանգի իրականացումից սկսած երկու տարի անց Հանձնաժողովը պետք է վերանայի սույն Հրահանգի կիրարկումը, այդ թվում, ապահովելու համար, որ տեխնոլոգիաների զարգացումը կամ իրավական իրավիճակի փոփոխությունները խոչընդոտներ չառաջացնեն սույն Հրահանգում սահմանված նպատակների իրականացմանը հասնելու համար. այն պետք է ուսումնասիրի նաև հարակից տեխնիկական ոլորտների ազդեցություններն ու դրա մասին զեկույց ներկայացնի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ,

28) Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության և համաչափության սկզբունքների համաձայն, էլեկտրոնային ստորագրությունների և հարակից ծառայությունների մատուցման ներդաշնակեցված իրավական դաշտ ստեղծելու նպատակը չի կարող բավարար կերպով իրականացվել անդամ պետությունների կողմից, ուստի առավել լավ կիրականացվի Համայնքի մակարդակում. սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Գործողության ոլորտը

Սույն Հրահանգի նպատակն էլեկտրոնային ստորագրությունների օգտագործմանը օժանդակելը և դրանց իրավական ճանաչմանը նպաստելն է: Այն սահմանում է էլեկտրոնային ստորագրությունների և որոշակի հավաստագրման ծառայությունների իրավական դաշտ՝ ներքին շուկայի պատշաճ գործունեությանը նպաստելու համար:

Այն չի վերաբերում պայմանագրերի կնքման և վավերականության կամ մյուս իրավական պարտավորություններին առնչվող հայեցակետերին, եթե դրանք համապատասխանում են ներպետական կամ Համայնքի իրավունքով նախատեսված ձևին ներկայացվող պահանջներին, կամ չեն վերաբերում փաստաթղթերի օգտագործումը կարգավորող՝ ներպետական կամ Համայնքի իրավունքով նախատեսված կանոններին և սահմանափակումներին:

Հոդված 2

Հասկացությունները

Սույն Հրահանգի նպատակով՝

1. «էլեկտրոնային ստորագրություն» նշանակում է էլեկտրոնային ձևաչափով տվյալներ, որոնք կցված կամ տրամաբանորեն համակցված են էլեկտրոնային այլ տվյալների հետ, և որոնք ծառայում են որպես իսկության հաստատման ձև.
2. «բարելավված էլեկտրոնային ստորագրություն» նշանակում է էլեկտրոնային ստորագրություն, որը բավարարում է հետևյալ պահանջները՝
 - ա) այն բացառապես կապված է ստորագրողի հետ,
 - բ) դրա միջոցով կարելի է նույնականացնել ստորագրողին,
 - գ) այն ստեղծված է այնպիսի միջոցների կիրառմամբ, որոնք ստորագրողը կարող է պահել իր բացառիկ հսկողության ներքո, և
 - դ) այն կապված է այն տվյալների հետ, որոնց առնչվում է, այն եղանակով, որ դրանց ցանկացած հետագա փոփոխություն հնարավոր լինի հետագծել.

3. «ստորագրող» նշանակում է այն անձը, ով տիրապետում է ստորագրության ստեղծման միջոցներին և գործում է կամ իր անունից կամ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի անունից, որին ինքը ներկայացնում է.
4. «ստորագրության ստեղծման տվյալներ» նշանակում են այն եզակի տվյալները, ինչպես օրինակ՝ պայմանանշանները կամ մասնավոր գաղտնաբառ բանալիները, որոնք ստորագրողն օգտագործում է իր էլեկտրոնային ստորագրությունը ստեղծելու համար.
5. «ստորագրության ստեղծման միջոցներ» նշանակում են ծրագրաշարային կամ սարքաշարային այնպիսի միջոցներ, որոնք օգտագործվում են ստորագրության ստեղծման տվյալների կիրարկման համար.
6. «անվտանգ ստորագրության ստեղծման միջոցներ» նշանակում են ստորագրության ստեղծման այնպիսի միջոցներ, որոնք բավարարում են 3-րդ հավելվածով սահմանված պահանջները.
7. «ստորագրության ստուգման տվյալներ» նշանակում են այնպիսի տվյալներ, ինչպես օրինակ՝ պայմանանշանները կամ հանրային գաղտնաբառ բանալիները, որոնք օգտագործվում են էլեկտրոնային ստորագրությունը ստուգելու նպատակով.
8. «ստորագրության ստուգման միջոցներ» նշանակում են ծրագրաշարային կամ սարքաշարային այնպիսի միջոցներ, որոնք օգտագործվում են ստորագրության ստուգման տվյալները կիրարկելու համար.
9. «հավաստագիր» նշանակում է էլեկտրոնային հավաստում, որը կապում է ստորագրության ստուգման տվյալներն անձի հետ և հաստատում է այդ անձի ինքնությունը.
10. «ստուգված հավաստագիր» նշանակում է այնպիսի հավաստագիր, որը բավարարում է 1-ին հավելվածով սահմանված պահանջները և տրամադրված է 2-րդ հավելվածով սահմանված պահանջները բավարարող հավաստագրման ծառայություններ մատուցողի կողմից.
11. «հավաստագրման ծառայություններ մատուցող» նշանակում է սուբյեկտ, կամ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տրամադրում է հավաստագրեր կամ մատուցում էլեկտրոնային ստորագրություններին առնչվող այլ ծառայություններ.
12. «էլեկտրոնային ստորագրության արտադրանք» նշանակում է ծրագրաշար կամ սարքաշար կամ դրանց համապատասխան բաղադրիչներ, որոնք նախատեսված են հավաստագրման ծառայություններ մատուցողի կողմից էլեկտրոնային ստորագրության ծառայությունների

մատուցման կամ էլեկտրոնային ստորագրությունների ստեղծման կամ ստուգման նպատակով օգտագործվելու համար.

13. «կամավոր հավատարմագրում» նշանակում է ցանկացած թույլտվություն, իրավունքների և պարտավորությունների սահմանում, որը հատկանշական է հավաստագրման ծառայությունների մատուցմանը, և որը տրամադրվում է հավաստագրման ծառայություն մատուցողի դիմումի համաձայն՝ այդ իրավունքների ու պարտավորությունների մշակման և դրանց հետ համապատասխանությունն ապահովելու համար պատասխանատու պետական կամ մասնավոր մարմնի կողմից, և պայմանով, որ նախքան նշված մարմնի կողմից համապատասխան որոշման ընդունումը, հավաստագրման ծառայություն մատուցողն իրավունք չունի կիրառելու այդ թույլտվությունից բխող իրավունքները:

Հոդված 3

Շուկա մուտք գործելը

1. Անդամ պետությունները հավաստագրման ծառայությունների մատուցումը չպետք է դարձնեն նախնական հավաստագրման առարկա:
2. Չհակասելով 1-ին պարբերության դրույթներին՝ անդամ պետությունները կարող են ներդնել կամ կիրառել կամավոր հավատարմագրման համակարգեր՝ հավաստագրման ծառայությունների մատուցման մակարդակը բարձրացնելու նպատակով: Նման համակարգերին վերաբերող բոլոր պայմանները պետք է լինեն անկողմնակալ, թափանցիկ, համաչափ և ոչ խտրական: Անդամ պետությունները սույն Հրահանգից բխող պատճառներով չեն կարող սահմանափակել հավատարմագրված հավաստագրման ծառայություններ մատուցողների քանակը:
3. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է իր տարածքում հիմնադրվող և հանրությանը՝ ստուգված հավաստագիր տրամադրող հավաստագրման ծառայություններ մատուցողների վերահսկումն ապահովող համապատասխան համակարգի ստեղծումը:
4. ►M1 Անվտանգ էլեկտրոնային ստորագրության ստեղծման միջոցների համապատասխանությունը 3-րդ հավելվածով սահմանված պահանջներին որոշվում է անդամ պետությունների կողմից նշանակված համապատասխան պետական կամ մասնավոր մարմինների կողմից: Հանձնաժողովը սահմանում է այն չափորոշիչները, որոնց հիման վրա անդամ պետությունը տվյալ մարմնի նշանակման մասին որոշում է կայացնում:

Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցը պետք է ընդունվի 9(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: ◀

Երրորդ հավելվածով սահմանված պահանջների հետ համապատասխանության մասին առաջին ենթապարբերությունում նշված մարմինների որոշումը պետք է ճանաչվի բոլոր անդամ պետությունների կողմից:

5. Հանձնաժողովը կարող է, ►M1 9(2) հոդվածով ◀ սահմանված ընթացակարգի համաձայն, սահմանել և հրապարակել էլեկտրոնային ստորագրության արտադրանքի համընդհանուր ճանաչված չափորոշիչների հաշվառման համարները Եվրոպական համայնքի պաշտոնական տեղեկագրում: Եթե էլեկտրոնային ստորագրության արտադրանքը համապատասխանում է այդ չափորոշիչներին, ապա անդամ պետություններն ընդունում են, որ 2-րդ հավելվածի «գ» կետում և 3-րդ հավելվածում սահմանված պահանջները բավարարված են:

6. Անդամ պետություններն ու Հանձնաժողովն աշխատում են միասին՝ ստորագրության ստուգման միջոցների մշակումն ու օգտագործումը խթանելու ուղղությամբ՝ հաշվի առնելով 4-րդ հավելվածով սահմանված անվտանգ ստորագրության ստուգման վերաբերյալ առաջարկությունները և ելնելով սպառողի շահերից :

7. Անդամ պետությունները կարող են լրացուցիչ պահանջներ ներկայացնել պետական հատվածում էլեկտրոնային ստորագրությունների կիրառման նկատմամբ: Նման պահանջները պետք է լինեն անկողմնակալ, թափանցիկ, համաչափ և ոչ խտրական ու վերաբերեն միայն դրանց կիրառման առանձնահատկություններին: Դրանք չեն կարող խոչընդոտ հանդիսանալ քաղաքացիներին մատուցվող միջսահմանային ծառայությունների համար:

Հոդված 4

Ներքին շուկայի սկզբունքները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում հիմնադրված հավաստագրման ծառայություններ մատուցողների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ կիրառում է սույն Հրահանգին համապատասխան ընդունված ներպետական դրույթներ: Անդամ պետությունները չեն կարող սահմանափակել այլ անդամ պետությունում

սկսված՝ սույն Հրահանգով նախատեսված ոլորտներում մատուցվող հավաստագրման ծառայությունները:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ սույն Հրահանգի պահանջները բավարարող էլեկտրոնային ստորագրության արտադրանքն ազատորեն շրջանառվի ներքին շուկայում:

Հոդված 5

Էլեկտրոնային ստորագրության իրավական հետևանքները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ ստուգված հավաստագրի հիման վրա կատարվող և անվտանգ ստորագրության ստեղծման միջոցներով ստեղծված բարելավված էլեկտրոնային ստորագրությունները՝

ա) էլեկտրոնային ձևաչափով տվյալներին առնչվող ստորագրությանը ներկայացվող իրավական պահանջները բավարարեն այնպես, ինչպես ձեռագիր ստորագրությունը բավարարում է թղթային կրիչի տվյալներին առնչվող պահանջները, և

բ) որպես ապացույց՝ ընդունելի լինեն դատական վարույթներում:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ դատական վարույթի շրջանակներում էլեկտրոնային ստորագրության իրավական նշանակությունը և որպես ապացույց դրա օգտագործումը չմերժվի միայն այն հիմքով, որ այն՝

- էլեկտրոնային ձևաչափ ունի, կամ
- հիմնված չէ ստուգված հավաստագրի վրա, կամ
- հիմնված չէ հավատարմագրված հավաստագրման ծառայություններ մատուցողի կողմից տրված ստուգված հավաստագրի վրա, կամ
- ստեղծված չէ ստորագրության ստեղծման անվտանգ միջոցով:

Հոդված 6

Պատասխանատվությունը

1. Անդամ պետությունները պետք է առնվազն ապահովեն, որ հավաստագիրը հանրությանը որպես ստուգված հավաստագիր տրամադրելով՝ կամ հանրությանը նման հավաստագրի

տրամադրումը երաշխավորելով՝ հավաստագրման ծառայություններ մատուցողը պատասխանատու է այդ հավաստագրին խելամտորեն վստահած ցանկացած սուբյեկտին, կամ իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատճառված վնասի համար՝

ա) որը վերաբերում է ստուգված հավաստագրում դրա տրամադրման պահին պարունակվող բոլոր տեղեկությունների ճշտությանը և վերաբերում է այդ հավաստագրում ստուգված հավաստագրի համար պարտադիր մանրամասների առկայությանը,

բ) երաշխավորելու համար, որ հավաստագրի տրամադրման պահին ստուգված հավաստագրում նույնականացված ստորագրողը տիրապետում է ստորագրության ստեղծման այն տվյալներին, որոնք համապատասխանում են հավաստագրում տրված կամ նշված ստորագրության ստուգման տվյալներին,

գ) երաշխավորելու համար, որ ստորագրության ստեղծման տվյալները և ստորագրության ստուգման տվյալները կարող են օգտագործվել միմյանց փոխլրացնելով այն դեպքերում, երբ այդ երկուսն էլ ստեղծվում են հավաստագրման ծառայություններ մատուցողի կողմից՝

բացառությամբ այն դեպքերի, երբ հավաստագրման ծառայություն մատուցողն ապացուցում է, որ ինքն անփութորեն չի գործել:

2. Անդամ պետությունները պետք է առնվազն ապահովեն, որ հավաստագիրը որպես ստուգված հավաստագիր հանրությանը տրամադրող հավաստագրման ծառայություններ մատուցողը պատասխանատվություն է կրում այդ հավաստագրի ճշտությանը խելամտորեն վստահած ցանկացած սուբյեկտին, կամ իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատճառված այն վնասի համար, որը հասցվել է հավաստագիրը չեղյալ չհայտարարելու դեպքում, եթե հավաստագրման ծառայություններ մատուցողը ապացուցում է, որ ինքն անփութորեն չի գործել:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հավաստագրման ծառայություններ մատուցողը կարողանա ստուգված հավաստագրում նշել այդ հավաստագրի օգտագործման սահմանափակումները՝ պայմանով, որ այդ սահմանափակումները ընդունելի լինեն երրորդ կողմերի համար: Հավաստագրման ծառայություններ մատուցողը պատասխանատվություն չի կրում այն ստուգված հավաստագրի օգտագործումից բխող վնասների համար, որն օգտագործվել է դրանում նշված սահմանափակումների գերազանցմամբ:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ հավաստագրման ծառայություններ մատուցողը կարողանա ստուգված հավաստագրում նշել այն գործարքների արժեքի

սահմանները, որոնց համար այն կարող է օգտագործվել՝ պայմանով, որ այդ սահմանափակումներն ընդունելի լինեն երրորդ կողմերի համար:

Հավաստագրման ծառայություններ մատուցողը պատասխանատվություն չի կրում սահմանված սամանափակումների առավելագույն շեմի գերազանցման հետևանքով առաջացած վնասների համար:

5. 1–4–րդ պարբերություններով նախատեսված դրույթները չպետք է հակասեն «Սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին» Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի 93/13/ԵՏՀ հրահանգին (8):

Հոդված 7

Միջազգային հայեցակետերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ երրորդ երկրում հիմնադրված հավաստագրման ծառայություններ մատուցողի կողմից հանրությանը որպես ստուգված հավաստագիր տրամադրվող հավաստագրերը ճանաչվեն որպես միևնույն իրավական ուժն ունեցող, ինչ որ Համայնքի ներսում հիմնադրված հավաստագրման ծառայություններ մատուցողի կողմից տրված հավաստագրերը, եթե՝

ա) հավաստագրման ծառայություններ մատուցողը բավարարում է սույն Հրահանգով սահմանված պահանջները և հավատարմագրվել է որևէ անդամ պետությունում հիմնադրված կամավոր հավատարմագրման համակարգին համապատասխան, կամ

բ) Համայնքում հիմնադրված հավաստագրման ծառայություններ մատուցողը, որը բավարարում է սույն Հրահանգում սահմանված պահանջները, երաշխավորում է հավաստագիրը, կամ

գ) հավաստագիրը կամ հավաստագրման ծառայություններ մատուցողը ճանաչվում է Համայնքի և երրորդ երկրների կամ միջազգային կազմակերպությունների միջև երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրով:

2. Երրորդ երկրների հետ միջսահմանային հավաստագրման ծառայությունների և երրորդ երկրներում ստեղծված բարելավված էլեկտրոնային ստորագրությունների իրավական ճանաչմանը նպաստելու նպատակով Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, առաջարկություններ է ներկայացնում՝ հավաստագրման ծառայություններին վերաբերող

չափանիշների կիրառումն ու միջազգային համաձայնագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Մասնավորապես, և անհրաժեշտության դեպքում, այն առաջարկ է ներկայացնում Խորհուրդ՝ երրորդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի շուրջ բանակցություններ վարելու համապատասխան մանդատների վերաբերյալ: Խորհուրդը դրա վերաբերյալ որոշումը կայացնում է ձայների որակյալ մեծամասնությամբ:

3. Եթե Հանձնաժողովը տեղեկացվում է բոլոր դժվարությունների մասին, որոնց բախվում են Համայնքի ձեռնարկությունները երրորդ երկրների շուկա մուտք գործելիս, ապա, անհրաժեշտության դեպքում, այն կարող է առաջարկներ ներկայացնել Խորհրդին՝ նշված երրորդ երկրներում Համայնքի ձեռնարկություններին համեմատելի իրավունքներ տրամադրելու վերաբերյալ բանակցություններ վարելու համապատասխան մանդատի մասին: Խորհուրդը դրա վերաբերյալ որոշումը կայացնում է ձայների որակյալ մեծամասնությամբ:

Սույն պարբերության համաձայն ձեռնարկված միջոցները չեն հակասում համապատասխան միջազգային համաձայնագրերի համաձայն Համայնքի և անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորություններին

Հոդված 8

Տվյալների պաշտպանությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հավաստագրման ծառայություններ մատուցողները և հավատարմագրման կամ վերահսկողության համար պատասխանատու ներպետական մարմինները բավարարեն «Անհատական տվյալների օգտագործմանն առնչվող անձանց պաշտպանության և այդպիսի տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգով (9) սահմանված պահանջները:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ հանրությանը հավաստագիր տրամադրող հավաստագրման ծառայություններ մատուցողները կարողանան անհատական տվյալները հավաքագրել միայն նման տվյալների սուբյեկտից կամ վերջինիս միանշանակ համաձայնությամբ և, այնքանով, որքանով որ դա անհրաժեշտ է՝ հավաստագիր տրամադրելու և այն օգտագործելու նպատակով: Առանց տվյալների սուբյեկտի միանշանակ

համաձայնության այդ տվյալները չեն կարող հավաքագրվել կամ օգտագործվել որևէ այլ նպատակներով:

3. Չհակասելով ներպետական իրավունքում ծածկանուններին վերագրվող իրավական հետևանքին, անդամ պետությունները հավաստագրման ծառայություններ մատուցողներին չպետք է արգելեն հավաստագրում էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձի անվան փոխարեն նշել ծածկանուն:

▼M1

Հոդված 9

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է էլեկտրոնային ստորագրությունների հարցերով կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:
3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 10

Կոմիտեի խնդիրները

Կոմիտեն, 9(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, հստակեցնում է սույն Հրահանգի հավելվածներում սահմանված պահանջները, 3(4) հոդվածում նշված չափորոշիչները և 3(5) հոդվածին համապատասխան սահմանված և հրապարակված էլեկտրոնային ստորագրության արտադրանքի համընդհանուր ճանաչում ստացած չափանիշները:

Հոդված 11

Ծանուցումը

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին ծանուցում են հետևյալը՝

ա) կամավոր հավատարմագրման ներպետական համակարգերի վերաբերյալ տեղեկությունները՝ ներառյալ 3(7) հոդվածով նախատեսված բոլոր լրացուցիչ պահանջները,

բ) հավատարմագրման և վերահսկողության համար պատասխանատու ներպետական մարմինների, ինչպես նաև 3(4) հոդվածում նշված մարմինների անվանումներն ու հասցեները,

գ) բոլոր հավատարմագրված հավաստագրման ծառայություններ մատուցողների անվանումներն ու հասցեները:

2. Անդամ պետությունները հնարավորինս արագ ծանուցում են 1-ին պարբերության համաձայն ներկայացված ցանկացած տեղեկության և դրա փոփոխության մասին:

Հոդված 12

Վերանայումը

1. Հանձնաժողովը վերանայում է սույն Հրահանգի գործողությունը և ամենաուշը մինչև 2003 թվականի հուլիսի 19-ը դրա վերաբերյալ զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

2. Վերանայման ընթացքում, այդ թվում, գնահատվում է սույն Հրահանգի գործողության ոլորտը փոփոխելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական, շուկայական և իրավական զարգացումները: Ձեռք բերված փորձի հիման վրա, զեկույցը, մասնավորապես, պետք է ներառի ներդաշնակեցման հարցերին առնչվող գնահատում: Անհրաժեշտության դեպքում զեկույցին կից ներկայացվում են օրենսդրական առաջարկություններ:

Հոդված 13

Կիրարկումը

1. Անդամ պետությունները պետք է գործողության մեջ դնեն սույն Հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը՝ նախքան 2001 թվականի հուլիսի 19-ը: Նրանք անհապաղ այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս միջոցները, դրանք պաշտոնական հրապարակման դեպքում պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու ձևերը սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի այն դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 14

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու օրը:

Հոդված 15

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Ստուգված հավաստագրերին ներկայացվող պահանջները

Ստուգված հավաստագրերը պետք է պարունակեն՝

- ա) նշում այն մասին, որ հավաստագիրը տրամադրվել է որպես ստուգված հավաստագիր,
- բ) հավաստագրման ծառայություններ մատուցողի նույնականացումը և այն պետության անվանումը, որտեղ այն հիմնադրվել է,
- գ) ստորագրողի անունը կամ ծածկանունը, որը կարող է նույնականացվել որպես այդպիսին,
- դ) հարկ եղած դեպքում՝ ստորագրողի հատուկ հատկանիշի մասին դրույթի ներառում՝ կախված այն բանից, թե ինչ նպատակով է տրված հավաստագիրը,
- ե) ստորագրության ստուգման տվյալները, որոնք համապատասխանում են ստորագրողի հսկողության տակ գտնվող ստորագրության ստեղծման տվյալներին,
- զ) հավաստագրի վավերականության ժամկետի սկզբի և ավարտի մասին նշումը,
- է) հավաստագրի նույնականացման գաղտնանիշը,
- ը) հավաստագրման ծառայություններ մատուցողի կողմից տրվող բարելավված էլեկտրոնային ստորագրությունը,
- թ) առկայության դեպքում՝ հավաստագրի օգտագործման սահմանափակումների շրջանակը, և
- ժ) առկայության դեպքում՝ այն գործարքների արժեքի սահմանափակումները, որոնց համար կարող է օգտագործվել հավաստագիրը:

**Ստուգված հավաստագրեր տվող հավաստագրման ծառայություններ մատուցողներին
ներկայացվող պահանջները**

Հավաստագրման ծառայություններ մատուցողները պետք է՝

- ա) ցույց տան հավաստագրման ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ հուսալիությունը,
- բ) ապահովեն արագագործ ու անվտանգ տեղեկագրի գործողությունը և անվտանգ ու արագ չեղյալ ճանաչման ծառայությունը,
- գ) ապահովեն, որ հավաստագրի տրման և չեղյալ հայտարարման ամսաթիվն ու ժամանակը հնարավոր լինի հստակ որոշել,
- դ) ներպետական իրավունքի համաձայն համապատասխան միջոցների կիրառմամբ նույնականացնեն այն անձին և, համապատասխան դեպքում, այդ անձի հատուկ բնութագրող գծերը, ում տրամադրվում է ստուգված հավաստագիրը,
- ե) ապահովեն, որ իրենց աշխատողները էլեկտրոնային ստորագրության տեխնոլոգիաների ոլորտում փորձաքննության և համապատասխան անվտանգության ընթացակարգերի հետ գործելու ոլորտում ծառայության մատուցման համար, մասնավորապես՝ ղեկավար մակարդակում, անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ, փորձառություն և որակավորում ունենան. նրանք պետք է կիրառեն նաև ընդունված չափանիշներին համարժեք և համապատասխան վարչական ու կառավարման ընթացակարգերը,
- զ) օգտագործեն հուսալի համակարգեր և արտադրանք, որոնք պաշտպանված են փոփոխություն կատարելու հնարավորություններից և երաշխավորեն դրանց կողմից իրականացվող գործընթացի տեխնիկական ու թվայնացված անվտանգությունը,
- է) միջոցներ ձեռնարկեն հավաստագրերի կեղծումների դեմ և, այն դեպքերում, երբ հավաստագրման ծառայություններ մատուցողը թողարկում է ստորագրության ստեղծման տվյալներ՝ երաշխավորեն դրանց թողարկման գործընթացի գաղտնիությունը,
- ը) ապահովեն բավարար ֆինանսական ռեսուրսներ՝ սույն Հրահանգով սահմանված պահանջներին համապատասխան գործելու համար, մասնավորապես, վնասների համար պատասխանատվություն կրեն, օրինակ՝ համապատասխան ապահովագրություն ձեռք բերելու միջոցով,

- թ) գրանցեն ստուգված հավաստագրին առնչվող ամբողջ անհրաժեշտ տեղեկությունները որոշակի ժամանակահատվածի համար, մասնավորապես, դատական վարույթներում հավաստագրման ապացույց ներկայացնելու նպատակով: Նման գրանցումները կարող են կատարվել էլեկտրոնային տարբերակով,
- ժ) չպահեն կամ չպատճենեն այն անձի ստորագրության ստեղծման տվյալները, ում հավաստագրման ծառայություններ մատուցողը կառավարմանն առնչվող ծառայություններ է մատուցել,
- ժա) նախքան էլեկտրոնային ստորագրություն ունենալու համար հավաստագրի համար դիմած անձի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելը, այդ անձին տվյալների փոխանցման հուսալի միջոցով տեղեկացնեն հավաստագրի օգտագործման հստակ պայմանների՝ ներառյալ դրա օգտագործման սահմանափակումների, կամավոր հավատարմագրման համակարգի և բողոքների ու վեճերի լուծման ընթացակարգերի մասին: Նման տեղեկությունները, որոնք կարող են փոխանցվել էլեկտրոնային եղանակով, պետք է լինեն գրավոր և շարադրված լինեն դյուրըմբռնելի լեզվով: Այդ տեղեկությունների համապատասխան մասերը պետք է նաև մատչելի լինեն հավաստագրին վստահող երրորդ կողմերին՝ նման պահանջի դեպքում,
- ժբ) օգտագործեն վստահելի համակարգեր՝ հավաստագրերը պահելու այնպիսի ձևաչափով, որը կհեշտացնի ստուգումն այնպես, որ՝
- միայն լիազոր անձինք կարողանան դրանց մեջ մուտքագրումներ կամ փոփոխություններ կատարել,
 - հնարավոր լինի ստուգել տեղեկությունների իսկությունը,
 - հավաստագրերը մատչելի լինեն հանրությանը միայն այն դեպքում, երբ ձեռք է բերվել հավաստագրի իրավատիրոջ համաձայնությունը, և
 - երբ տնտեսավարող սուբյեկտը տեղյակ է նշված անվտանգության պահանջները վտանգող ցանկացած տեխնիկական փոփոխության մասին:

Անվտանգ ստորագրության ստեղծման միջոցներին ներկայացվող պահանջները

1. Անվտանգ ստորագրության ստեղծման միջոցները, տեխնիկական և ընթացակարգային պատշաճ եղանակներով, պետք է առնվազն ապահովեն, որ՝
 - ա) ստորագրությունների ստեղծման համար կիրառվող ստորագրության ստեղծման տվյալները գործնականում հնարավոր լինի թողարկել միայն մեկ անգամ և, որ ողջամտության սահմաններում ապահովվի դրանց գաղտնիությունը,
 - բ) ստորագրությունների ստեղծման համար կիրառվող ստորագրության ստեղծման տվյալները հիմնավոր ապահովվածությամբ հնարավոր չլինի վերհանել և, որ ստորագրությունը պաշտպանված լինի ներկայումս գոյություն ունեցող տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվող կեղծումներից,
 - գ) օրինական ստորագրողի կողմից ստորագրությունների ստեղծման համար կիրառվող ստորագրության ստեղծման տվյալները կարողանան հուսալիորեն պաշտպանվել ուրիշների օգտագործումից:
2. Անվտանգ ստորագրության ստեղծման միջոցները չպետք է փոփոխեն ստորագրման ենթակա տվյալները կամ խոչընդոտեն այն ստորագրողին ներկայացնելը՝ նախքան ստորագրման պահը:

Անվտանգ ստորագրության ստուգման վերաբերյալ առաջարկությունները

Ստորագրության ստուգման գործընթացի ընթացքում պետք է խելամտորեն ապահովել, որ՝

- ա) ստորագրության ստուգման համար օգտագործվող տվյալները համապատասխանեն ստուգողին ներկայացված տվյալներին,
- բ) ստորագրությունը հուսալիորեն ստուգված լինի, և այդ ստուգման արդյունքները ճշգրիտ կերպով ներկայացված լինեն,
- գ) ստուգողն անհրաժեշտության դեպքում կարողանա հուսալիորեն սահմանել ստորագրված տվյալների բովանդակության տարրերը,
- դ) ստորագրության ստուգման ժամանակ պահանջվող՝ հավաստագրի իսկությունն ու վավերականությունը հուսալիորեն ստուգված լինեն,
- ե) ճշգրտորեն ներկայացվեն ստուգման արդյունքները և ստորագրողի ինքնությունը,
- զ) հստակ նշված լինի ծածկանվան կիրառումը, և
- է) անվտանգությանն առնչվող բոլոր փոփոխությունները հնարավոր լինի բացահայտել:

1) ՊՏ C 325, 23.10.1998թ., էջ 5:

2) ՊՏ C 40, 15.02.1999թ., էջ 29:

3) ՊՏ C 93, 06.04.1999թ., էջ 33:

4) Եվրոպական պառլամենտի 1999 թվականի հունվարի 13-ի եզրակացություն (ՊՏ C 104, 14.04.1999թ., էջ 49), Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 243, 27.08.1999թ., էջ 33) և Եվրոպական պառլամենտի 1999 թվականի հոկտեմբերի 27-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել): Խորհրդի 1999 թվականի նոյեմբերի 30-ի որոշում:

5) ՊՏ L 367, 31.12.1994թ., էջ 1: Թիվ 837/95 կանոնակարգով (ԵՀ) (ՊՏ L 90, 21.04.1995թ., էջ 1) փոփոխված կանոնակարգ:

6) ՊՏ L 367, 31.12.1994թ., էջ 8: 99/193/ԵՀ որոշմամբ (ՊՏ L 73, 19.03.1999թ., էջ 1) վերջին անգամ փոփոխված որոշում:

7) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

8) ՊՏ L 95, 21.04.1993թ., էջ 29:

9) ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31: